[2] աշխատությունը նկարագրում է հաստատուն մագնիսով շարժիչի էլեկտրական և էլեկտրամագնիսական անսարքությունները և դրանց բացահայտման ընթացակարգը: Մշտադիտարկվում են միայն ֆազային հոսանքները, և vDS-զգայուն դաշտային տրանզիստորների միջոցով հնարավորություն է ստեղծվել՝ ապահովելու ուժային սարքերի պաշտպանությունը: Անսարքության մասին ինֆորմացիան հաղորդվում է կարգավորիչին, և իրականացվում է անսարքության նույնականացման ռեժիմը: Ֆազային հոսանքների մոնիտորինգը թույլ է տալիս ճանաչել սահմանված արժեքներից շեղումները: Անսարք հայտնաբերված ֆազն անջատվում է, և եռաֆազ մեքենան անցնում է երկփուլ աշխատանքային ռեժիմի:

Հայտնի է սինխրոն գեներատորի խափանումների հայտնաբերման անորոշ համակարգի վրա հիմնված սխեման [3]: Այս դեպքում ուղիղ և հակառակ հաջորդականությամբ հոսանքներն օգտագործվում են որպես անսարքության բացահայտման ցուցիչներ և որպես մուտքային տվյալներ տրվում են անսարքության դետեկտորին: Ստեղծվում է ելքային համակարգ, և գնահատվում է կանոնների բազան՝ բացահայտելով ընթացիկ բաղադրիչը անսարքությունների տեսակի դեպքում:

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում [4] հողվածում առաջարկվող եռաֆազ սինխրոն շարժիչի աշխատանքային վիճակի հետազոտման մոդելը: Մոդելն իրականացված է MATLAB ծրագրային միջավայրում, էլեկտրամեխանիկայում լայն կիրառություն ստացած Պարկ-Գորնի հավասարումների հիմքով: Անցումային երևույթների ժամանակ գնահատվել են շարժիչի էլեկտրամագնիսական մոմենտի, ստատորի a,b,c ֆազային հոսանքների, ինչպես նաև ուղիղ և հակառակ հաջորդականությամբ հոսանքների հարաբերակցությունների փոփոխությունները: Հաստատվել է, որ ցանցի սնման լարման և տեխնոլոգիական մեխանիզմի բեռի մոմենտի փոփոխման պայմաններում ստատորի ֆազային փաթույթներում առաջանում են հակառակ հաջորդականությամբ հոսանքներ:

Վերջին տարիներին արհեստական նեյրոնային ցանցերի հնարավորություններն ավելի հաճախ են կիրառվում անսարքությունների հայտնաբերմանը վերաբերող խնդիրների լուծման համար [5-8]:

Արհեստական նեյրոցանցի կիրառմամբ էլեկտրամեխանիկական համակարգերի տեխնիկական վիճակների արատորոշման առավել ընդհանրական մոտեցումներ են առաջարկվել [5] աշխատությունում: Համակարգի արատորոշման հիմնական ապարատային տարրը նեյրոնային ցանցային սարքն է, որի ելքից վերցվում են էլեկտրամեխանիկական համակարգի տեխնիկական վիճակների վերաբերյալ որոշումները: Սահմանվել է տեխնիկական պայմանների ներկառուցված արատորոշման համակարգերում նեյրոչիպերի օգտագործման նպատակահարմարությունը: Հիմնավորվել է նեյրոհամակարգիչ և հաղորդիչ հաշվողական

համակարգերի օգտագործման նպատակահարմարությունը այն դեպքում, երբ կո-դավորման, փոխանցման, էլեկտրամեխանիկական համակարգի տեխնիկական պայմանների վերահսկման համար խմբային ազդանշանի հավաքման բլոկը և տեխնիկական վիճակի հսկման, առաջնային մշակման, ապափաթեթավորման և նեյրոնային ցանցի վերլուծության համար խմբային ազդանշան ստանալու բլոկը բաժանված են երկու գոտու: Կատարվել է ուսումնասիրություն բարդ էլեկտրամե-խանիկական համակարգերի արատորոշման համար նեյրոնային ցանցերի ծրագ-րային տարբերակների օգտագործման հնարավորության վերաբերյալ [5]:

Սույն աշխատությունում սինխրոն մեքենայի մոնիթորինգի համար առաջ-նորդվել ենք նրանով, որ ոչ սիմետրիկ ռեժիմները ստատորի փաթույթներում առա-ջացնում են հակառակ հաջորդականությամբ հոսանքներ, որոնք հանգեցնում են անցանկալի և վթարավտանգ երևույթների առաջացմանը [4]:

- հանգստացնող փաթույթի կամ ռոտորի զանգվածային մասերի կորուստ-ների մեծացում և տաքացում,

- ստատորի և ռոտորի հոսանքների բարձր հարմոնիկներ,

- հոսանքների և լարումների ոչ սինուսոիդալություն՝ պայմանավորված ռոտորի մագնիսական և էլեկտրական ոչ սիմետրիկությամբ:

Եռաֆազ սինխրոն մեքենաներում ոչ սիմետրիկ ռեժիմներն առաջանում են ցանցին հզոր միաֆազ սպառիչի միացման, ինչպես նաև ֆազի կտրման և միա-ֆազ կամ երկֆազ կարճ միացումների դեպքերում [9-11]:


Չնայած նրան, որ միաֆազ և եռաֆազ կարճ միացումները հիմնականում առաջացնում են կարճատև ոչ սիմետրիկություն, այնուամենայնիվ, դրանք ծան-րացնում են էլեկտրական մեքենայի աշխատանքը և կարող են զանազան վթար-ների պատճառ դառնալ:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ տարբեր տեխնոլո-գիական գործընթացներում օգտագործվող էլեկտրական մեքենաներում առաջա-ցող վթարների կանխմանը միտված հետազոտությունը գիտական հետաքրքրու-թյուն է ներկայացնում, ինչին էլ ուղղված է սույն աշխատանքը:

Աշխատանքի նպատակն է մշակել մոնիթորինգի ալգորիթմ, որը հնարա-վորություն կտա ֆազային կարճ միացումների դեպքում հայտնաբերել եռաֆազ սինխրոն մեքենայի ստատորի փաթույթներում առաջացած ոչ սիմետրիկությունը:

Հետազոտության արդյունքները: Սինխրոն մեքենայի աշխատանքի ընթաց-քում առավել հաճախ ֆազերի բեռի ոչ սիմետրիկությունն առաջանում է ցանցի գծերի միաֆազ և զրոյական լարի միջև, ինչպես նաև երկֆազ կարճ միացումների դեպքում: Սույն աշխատությունում դիտարկվում են եռաֆազ սինխրոն մեքենայի ստատորի փաթույթի աստղաձև միացման համար ուղիղ (I_1), հակառակ (I_2) և զրոյական (I_0) հոսանքները միաֆազ, երկֆազ կարճ միացումների դեպքում:

Նկ. 1-ում ներկայացված են a, b և c ֆազերում միաֆազ և երկֆազ և չեզոքի վրա երկֆազ կարճ միացումների ուսումնասիրման սխեմաները:



Նկ. 1. ա) միաֆազ, բ) երկֆազ, գ) չեզոքի վրա երկֆազ կարճ միացումների հետազոտման սխեմաները

Աղ. 1-3-ում բերված են կարճ միացումների դեպքում ուղիղ, հակառակ և զրոյական հոսանքների հավասարումները:

Աղյուսակ 1

Միաֆազ կարճ միացումների դեպքում սինխրոն մեքենայի խարսխի փաթույթի բնութագրական առնչությունները

Միաֆազ կարճ միացումները	Ֆազային հոսանքները և լարումները	I_1, I_2, I_0 հոսանքների հավասարումները
a ֆազում	$I_b = I_c = 0, I_a = 3I_0, U_a = 0$	$I_1 = I_2 = I_0 = I_a/3$
b ֆազում	$I_a = I_c = 0, I_b = 3I_0, U_b = 0$	$I_1 = I_2 = I_0 = I_b/3$
c ֆազում	$I_b = I_a = 0, I_c = 3I_0, U_c = 0$	$I_1 = I_2 = I_0 = I_c/3$

Երկֆազ կարճ միացումների դեպքում սինխրոն մեքենայի խարիսխի փաթույթի բնութագրական առնչությունները

Երկֆազ կարճ միացումները	Ֆազային հոսանքները	I_1, I_2, I_0 հոսանքների հավասարումները
cb ֆազերի միջև	$I_b = -I_c, I_a = 0$,	$I_1 = j \frac{I_b}{\sqrt{3}}, I_2 = -j \frac{I_b}{\sqrt{3}}, I_0 = 0$
ba ֆազերի միջև	$I_a = -I_b, I_c = 0$	$I_1 = j \frac{I_a}{\sqrt{3}}, I_2 = -j \frac{I_a}{\sqrt{3}}, I_0 = 0$
ac ֆազերի միջև	$I_c = -I_a, I_b = 0$	$I_1 = j \frac{I_c}{\sqrt{3}}, I_2 = -j \frac{I_c}{\sqrt{3}}, I_0 = 0$

Չեզոքի վրա երկֆազ կարճ միացումների դեպքում սինխրոն մեքենայի խարիսխի փաթույթի բնութագրական առնչությունները


Երկֆազ չեզոքի վրա կարճ միացումները	Ֆազային լարումները և հոսանքները	U_1, U_2, U_0 լարումների հավասարումները
cb ֆազերի միջև	$U_b = U_c = 0, I_a = 0$,	$U_a = 3U_0, U_1 = U_2 = U_0 = \frac{U_a}{3}$
ba ֆազերի միջև	$U_b = U_a = 0, I_c = 0$	$U_c = 3U_0, U_1 = U_2 = U_0 = \frac{U_c}{3}$
ac ֆազերի միջև	$U_a = U_c = 0, I_b = 0$	$U_b = 3U_0, U_1 = U_2 = U_0 = \frac{U_b}{3}$

Աղ.1-3-ում ստացված արդյունքներից հետևում է, որ ոչ սիմետրիկ կարճ միացումների ժամանակին բացահայտման համար անհրաժեշտ է իմանալ ֆազային հոսանքների և լարումների արժեքը, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տվիչների միջոցով: Նեյրոնային ցանցերի օգտագործումը էլեկտրամեխանիկական համակարգի արատորոշման խնդիրներում հեռանկարային է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք կարող են ոչ միայն բացահայտել անսարքությունները, այլ նաև վերահսկել համակարգի աշխատանքը [5-8]: Աշխատանքում առաջարկվող սինխրոն մեքենայի ֆազային կարճ միացումների ստեղծած հետևանքների մոնիթորինգն իրականացվում է նեյրոցանցի կիրառմամբ:

Ստորև ներկայացվում է առաջարկվող մոնիթորինգի համակարգի իրականացման ալգորիթմը:

1. Մինիստրն մեքենայի ֆազային հոսանքների և լարումների չափման համար տեղակայված տվիչներից ստացվող ազդանշանների հավաքագրում:
2. Ստացված անալոգային ազդանշանի թվայնացում և նեյրոցանցային փոխանցման համար պահանջվող ազդանշանի ձևավորում:
3. Նեյրոցանցի կառուցվածքի ընտրություն, հաշվի առնելով, որ նեյրոցանցի մուտքային շերտը պետք է ընդգրկի հսկվող պարամետրերի քանակին համապատասխան նեյրոններ:
4. Նեյրոցանցի ուսուցման ալգորիթմի ընտրություն և իրականացում:
5. Հսկման արդյունքի վերաբերյալ որոշումների ընդունում:
6. Ստացված արդյունքների ներկայացում:

Նկ. 2-ում բերված է ներկայացված ալգորիթմի իրականացման կառուցվածքային սխեման:



Նկ. 2. Մինիստրն մեքենայում ոչ սիմետրիկ ռեժիմների առաջացման մոնիթորինգի համակարգի կառուցվածքային սխեման

Եզրակացություն: Մշակված ալգորիթմը թույլ է տալիս հավաքագրել, գնահատել, դասակարգել սինխրոն մեքենայի ոչ սիմետրիկ ռեժիմները բնութագրող գործոնները և դրանց վարժեցման արդյունքում ընդունել համակարգի վիճակի մասին որոշումներ: Ստացված արդյունքները կարող են հաջողությամբ կիրառվել նաև էլեկտրաբանեցման համակարգի կառավարման համակարգի անխափան աշխատանքի ապահովման համար:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2B195 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Garance Vinson, Michel Combacau, Thomas Prado.** Synchronous Machine Faults Detection and Diagnosis for Electro-mechanical Actuators in Aeronautics. - 2014. <https://hal.archives-ouvertes.fr/hal-00925501>
2. **Krautstrunk A.** Fault Detection and Identification for Permanent Magnet Synchronous Motor Drives/ Synopsis of paper PCIM'99 within topic number IM 7.3.
3. **Selvaganesan N. and Saraswathy Ramya R.** Fuzzy Fault Detection for Permanent Magnet Synchronous Generator // ICTACT Journal on Soft Computing: Special Issue on Fuzzy in Industrial and Process Automation. - 2011. - Vol. 02, issue 1. – P. 224-232.
4. **Baghdasaryan M.K., Ulikyan A.T.** Study of the operating state of a synchronous motor electric drive by means of changes estimation of the stator current behavior // International Review of Electrical Engineering. – 2022. - Vol. 17, N2. - P. 177-184.
5. **Палюх Б.В., Шпрехер Д.М., Богатилов В.Н.** Диагностирование электромеханических систем на основе нейросетевых технологий // Программные продукты и системы. - 2015. - № 3 (111). - С. 5-11.
6. **Горева Т.И., Портнягин Н.Н., Пюкке Г.А.** Нейросетевые модели диагностики технических систем//Вестник КРАУНЦ. Физ.-мат. науки. - 2012. – Вып. 1(4). - С. 31–43.
7. **Шпрехер Д.М.** Создание программно-аппаратного комплекса для нейросетевой системы диагностирования электромеханических систем горных машин // Изв. вузов: Горный журнал. - 2012. - № 5. - С. 98–101.
8. **Tanvir A.A., Merabet A.** Artificial Neural Network and Kalman Filter for Estimation and Control in Standalone Induction Generator Wind Energy DC Microgrid // Energies.- 2020. – 13. – P.1743.
9. Theoretical Analysis of the Voltage Unbalance Factor to Characterize Unbalance Problems in Induction Motors / **E.C. Quispe, V.S. Santos, I.D. López, et al** // International Review Of Electrical Engineering. - 2021. - Vol. 16, № 1. - P. 8-16.
10. **Pruski P.** Analysis of asymmetrical operating conditions of a power system for different models of synchronous generators // ITM Web Conf. – 2019. - Vol. 28. - P.1-2.

11. **Campbell M., Arce G.** Effect of Motor Voltage Unbalance on Motor Vibration: Test and Evaluation // IEEE Transactions on Industry Applications. - 2018. - Vol. 54, № 1. - P. 905–911.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն: 04.10.2022:

М.К. БАГДАСАРЯН, А.Г. АРАКЕЛЯН, Д.В. ДАВТЯН

АЛГОРИТМ РЕАЛИЗАЦИИ МОНИТОРИНГА АСИММЕТРИЧНЫХ РЕЖИМОВ ТРЕХФАЗНОЙ СИНХРОННОЙ МАШИНЫ

Анализируются возможности мониторинга и выявления неисправностей синхронной машины. Обоснована необходимость применения наиболее эффективного алгоритма, который обеспечивает возможность анализа большого числа данных для реализации мониторинга асимметричных режимов синхронной машины в случае фазных коротких замыканий. Разработаны алгоритм мониторинга возникновения асимметричных режимов в синхронной машине и структурная схема системы.

Ключевые слова: фазное короткое замыкание, мониторинг, алгоритм, нейронная сеть, синхронная машина.

M.K. BAGHDASARYAN, A.G. ARAKELYAN, D.V. DAVTYAN

THE ALGORITHM FOR MONITORING THE ASYMMETRIC MODES OF A THREE-PHASE SYNCHRONOUS MACHINE

The possibilities of monitoring and detecting malfunctions of a synchronous machine are analyzed. The necessity of using the most effective algorithm, which provides the possibility of analyzing a large number of data for monitoring the asymmetric modes of a synchronous machine in the case of phase short circuits is substantiated. An algorithm for monitoring the occurrence of asymmetric modes in a synchronous machine and a block diagram of the system have been developed.

Keywords: phase short circuit, monitoring, algorithm, neural network, synchronous machine.

Կ.Հ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ԲԱԿՈՒՆՑ

**ՌԵԼԻԵՖԱՑԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԱՆԱԼԻՏԻԿԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ**

Դուրս են բերված այն ձևափոխության անալիտիկ բանաձևերը, որի միջոցով տարածության ցանկացած օբյեկտը (բնօրինակը) ճշտորեն արտապատկերվում է իր ռելիեֆային հեռանկարին (կերպարին): Այդ բանաձևերով կապ է հաստատվում բնօրինակի յուրաքանչյուր կետի և կերպարի վրա այդ կետին համապատասխանող կետի դեկարտյան կոորդինատների միջև:

Առանցքային բառեր. պրոյեկտիվ արտապատկերում, ձևափոխություն, անիսկական կետեր, կերպար, հարթություն, ճառագայթ, կրկնակի տարրեր:

Ներածություն: Մեր երկրի տնտեսության մակարդակը բարձրացնելու համար այսօր որպես առաջնահերթ խնդիր է դիտվում ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի հնարավորությունների լայն կիրառումը և ավտոմատացումը գործունեության բոլոր բնագավառներում: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է արագացնել գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների տեմպերը և ավելի արդյունավետ դարձնել գիտության ձեռքբերումների ներդրումը տնտեսության մեջ:

Վերոհիշյալ խնդրի լուծման ուղղություններից մեկը ավտոմատացված նախագծման և արտադրության համակարգերի ստեղծումն է, որը հնարավոր չէ պատկերացնել՝ առանց կիրառելու համակարգչային գրաֆիկայի ձեռքբերումներն ու ժամանակակից հնարավորությունները: Ներկայումս նախագծերի ստեղծման համար նախագծողների աշխատանքի հիմնական լեզուն կամ միջոցը գրաֆիկական մոդելն է, լինի դա կառուցված թղթի վրա, թե համակարգչի էկրանին: Նախագծման գործընթացում ստեղծվում են օբյեկտների մոդելներ, որոնք նախագծման տարբեր փուլերում կարող են իրարից տարբերվել իրենց բովանդակային մակարդակներով: Սակայն ինչպիսի բովանդակություն էլ վեցնելու լինենք, միևնույնն է, տվյալների ներկայացման ամենալավ եղանակը գրաֆիկականն է: Դժվար է պատկերացնել նախագծման այնպիսի բնագավառ, որտեղ նախագծողը չի օգտագործում գրաֆիկական այս կամ այն միջավայրը:

Նախագծման միջավայրի փոփոխությունը՝ գրաֆիկական ինֆորմացիայի մշակման ավանդական միջոցներից համակարգչայինին անցումը, ծնում է

աշխատանքի նոր տեխնոլոգիաներ: Նախ և առաջ դա օբյեկտի մոդելի գործնական-
նորեն ակնթարթային հասանելիությունն է և նախագծման տարբեր փուլերում
այդ մոդելի ամենահարմար ներկայացման ձևի ընտրության հնարավորությունը:
Օրինակ, օբյեկտի ձևը նախագծելիս փոխհարաբերության ամենալավ եղանակը
կլինի աշխատանքը օբյեկտի եռաչափ մոդելով, քանի որ այս դեպքում հնարավո-
րություն է ընձեռվում օբյեկտը դիտարկել զանազան դիտակետերից, ներառելով
նաև նրա գույնը, նյութը, որոնք նպաստում են ճշտորեն որոշելու օբյեկտը բնու-
թագրող առանձնահատկությունները:

Գրաֆիկական ինֆորմացիայի մշակման համակարգչային եղանակի կարևո-
րագույն առանձնահատկությունն այն է, որ այս դեպքում հնարավոր է ավտոմատ
ռեժիմում ձևափոխել նախագծվող օբյեկտի երկրաչափական մոդելը՝ ավտոմա-
տացված նախագծման այս կամ այն համակարգի տարբեր ենթահամակարգերում
այն արտապատկերելու և օգտագործելու նպատակով:

Այս հնարավորությունը թույլ է տալիս՝ անցնելու նախագծման համակար-
գերի, արտադրության տեխնոլոգիական նախապատրաստման և բուն արտադրու-
թյան համատեղման նոր, հեռանկարային մեթոդաբանությանը՝ միասնական
տվյալների բազայի հիման վրա, որի կենտրոնում է գտնվում նախագծվող և ար-
տադրվող օբյեկտի մոդելը, որի բովանդակությունն են կազմում գրաֆիկական կամ
երկրաչափական տվյալները:

Ավտոմատացված նախագծման համակարգերում կարելի է առանձնացնել
գրաֆիկական համակարգերի կառուցման երկու ձևեր.

- գծագրի վրա կողմնորոշված,
- օբյեկտի վրա կողմնորոշված:

Գծագրի վրա կողմնորոշված համակարգերն ապահովում են գծագրա-կոնստ-
րուկտորական փաստաթղթերի ստեղծման համար անհրաժեշտ բոլոր պայման-
ները: Այսպիսի համակարգերում ստեղծվում է ոչ թե օբյեկտը (մոդելը), այլ գրա-
ֆիկական փաստաթուղթը:

Ավտոմատացված նախագծման համակարգերի գրաֆիկական համակար-
գերի էվոլյուցիան այսօր հանգեցրել է նրան, որ գծագրի վրա կողմնորոշված հա-
մակարգերն աստիճանաբար կորցնում են իրենց նշանակությունը: Իսկ օբյեկտի
վրա կողմնորոշված համակարգերը հեռանկարային են համարվում այն ավտո-
մատացված նախագծման համակարգերի համար, որոնք ունեն անմիջական ելք
դեպի ավտոմատացված արտադրությունը:

Ներկայումս օբյեկտի վրա կողմնորոշված գրաֆիկական համակարգերում,
որոնց շուկան բավականին լայն է, հիմնականում լուծված են օբյեկտի երկրաչա-
փական, ինչպես նաև նյութական և գունեղանգային մոդելավորման խնդիրները:
Լուծված են նաև մոդելների տարբեր տեսքերի, այդ թվում՝ նաև հեռանկարային


տեսքերի ստացման հետ կապված խնդիրները: Մասամբ լուծված են մոդելի ձևափոխման խնդիրները: Մոդելը կարելի է տեղաշարժել, պտտել, փոփոխել նրա մասշտաբը, սեղմել և ձգել: Սրանք գծային աֆինական ձևափոխություններ են:

Մասնավորապես լուծված չէ այն խնդիրը, որը թույլ կտար ստանալու օբյեկտի այսպիսի ծավալային եռաչափ մոդելը, որը տեղավորվեր տարածության նախապես առաջադրված երկու մակերևույթներով սահմանափակված նեղ շերտի մեջ և տարածության որևէ կետում գտնվող դիտողի մեջ առաջացներ իրական օբյեկտի տպավորությունը:

Օբյեկտի այսպիսի ծավալային (ռելիեֆային) կերպարը կոչվում է ռելիեֆային հեռանկար, որը կարելի է ստանալ օբյեկտի կենտրոնական պրոյեկտիվ երկրաչափական ձևափոխության միջոցով:

Կոորդինատների ձևափոխության բանաձևերը: Բանաձևերի դուրսբերման համար նախ օգտվենք ռելիեֆային հեռանկարի սահմանումից (դրան ներկայացվող պահանջներից):

Դեկարտյան կոորդինատների սկզբնակետը համատեղենք C դիտակետի հետ, իսկ Y առանցքը դասավորենք ուղղահայաց այն Q և P հարթություններին, որոնցով սահմանափակված տարածության շերտում պետք է ստացվի ռելիեֆային հեռանկարը (նկ.1):



Նկ. 1. Ռելիեֆային հեռանկարի կառուցումը դեկարտյան համակարգում

Դիտարկենք տարածության կամայական $M(a, b, c)$ կետը: Այս կետի M_1 կերպարը պետք է տեղավորվի Q և P հարթությունների միջև և դասավորվի դիտակետով անցնող CM ճառագայթի վրա (բնօրինակը և նրա կերպարը դիտողի մեջ պետք է առաջացնեն նույն տպավորությունը):

SM ճառագայթի բոլոր կետերը, այդ թվում՝ նաև նրա **M_∞** անիսկական (անվերջ հեռու) կետը, կարելի է նկարագրել **a, b, c** մեծություններով՝ մեկ փոփոխական **U** պարամետրի միջոցով (**a, b, c, U**): Այդ կետերի դեկարտյան կոորդինատները կորոշվեն հետևյալ բանաձևերով՝

$$x = \frac{a}{U}, Y = \frac{b}{U}, Z = \frac{c}{U}, \quad (1)$$

որտեղ **U** պարամետրը փոփոխվում է **0 ... ∞**: Այս պարամետրի **0** արժեքի դեպքում որոշվում է **CM** ճառագայթի **M_∞** անիսկական կետը, իսկ **∞** արժեքի դեպքում՝ **C** սկզբնակետը:

M կետի **M₁** կերպարը նկարագրենք **U₁** պարամետրի միջոցով՝ (**a, b, c, U₁**): Նրա դեկարտյան կոորդինատները կորոշվեն հետևյալ բանաձևերով՝

$$x_1 = \frac{a}{U_1}, Y_1 = \frac{b}{U_1}, Z_1 = \frac{c}{U_1}, \quad (2)$$

որտեղ պարամետրը ևս կարող է փոփոխվել **0 ... ∞**:

M և **M₁** կետերի համապատասխանության օրենքը (կամ, որ նույնն է, տարածության ձևափոխությունը) կարելի է հաստատել՝ առաջադրելով **U** և **U₁** պարամետրերի միջև կապ հաստատող **U₁ = f(U)** ֆունկցիան: Քանի որ արդեն գիտենք, որ ռելիեֆային հեռանկարի ստացման համար կիրառվող ձևափոխությունը պետք է զծային լինի, ուստի այս ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը՝

$$U_1 = mU + n: \quad (3)$$

Այս ֆունկցիայի **m** և **n** գործակիցները որոշելու համար պետք է օգտագործել ռելիեֆային հեռանկարի ստացման համար անհրաժեշտ նախնական պայմանները: Դիտարկենք նախնական պայմանների առաջադրման երկու դեպք.

1. Տրվում են ռելիեֆի շերտի սահմանային **P** հարթության **D** հեռավորությունը **C** դիտակետից և շերտի **K** հաստությունը (նկ. 1):

Անշարժ կետերի **α** հարթության հեռավորությունը դիտակետից կլինի՝

$$F = D - K: \quad (4)$$

Այս դեպքում տարածության անիսկական կետերի (**U = 0**) կերպարները պետք է դասավորվեն **β** հարթության մեջ, այսինքն՝ **U = 0** - ի դեպքում **Y₁ = D**,

և (2) - ից ստանում ենք՝ **U₁ = $\frac{b}{D}$** :

Պարամետրերի այս արժեքները տեղադրելով (3) -ի մեջ, ստանում ենք՝

$$n = \frac{b}{D}: \quad (5)$$

Եթե բնօրինակ-կետը դասավորված է Q հարթության մեջ՝ $Y = F$ և $U = \frac{b}{F}$,
 ապա այս դեպքում նրա կերպարը համընկնում է այդ կետին՝ $Y_1 = F$ և $U_1 = \frac{b}{F}$:
 Պարամետրերի այս արժեքները տեղադրելով (3) –ի մեջ, ստանում ենք՝

$$\frac{b}{F} = m \frac{b}{F} + \frac{b}{D}, m = \frac{D-F}{D} \text{ կամ } m = \frac{K}{D},$$

և գործակիցների արժեքները տեղադրելով (3) – ի մեջ՝ ստանում ենք որոնելի ֆունկցիայի վերջնական տեսքը՝

$$DU_1 = KU + b : \quad (6)$$

(1), (2) և (6) – ից ստանում ենք որոնելի ձևափոխության հետևյալ անալի-
 տիկ բանաձևերը՝ արտահայտված դեկարտյան կոորդինատներով.

Բնօրինակ $\rightarrow$ կերպար Կերպար $\rightarrow$ բնօրինակ

$$\begin{cases} X_1 = \frac{DX}{Y+K} \\ Y_1 = \frac{DY}{Y+K} \\ Z_1 = \frac{DZ}{Y+K} \end{cases}, \quad (7)$$

$$\begin{cases} X = \frac{KX_1}{D-Y_1} \\ Y = \frac{KY_1}{D-Y_1} \\ Z = \frac{KZ_1}{D-Y_1} \end{cases}: \quad (8)$$

(7) հավասարումներից բխում է, որ կերպարի Y_1 կոորդինատը սահմանա-
 փակ մեծություն է և չի գերազանցում D մեծությանը: Իրոք՝


$$\text{Եթե } Y \rightarrow \infty, \text{ ապա } Y_1 = \frac{DY}{Y+K} = \lim_{Y \rightarrow \infty} \frac{D}{1 + \frac{K}{Y}} = D :$$

Սա նշանակում է, որ տարածության ցանկացած օբյեկտի ռելիեֆային հեռա-
 նկարն իրոք տեղավորվում է նախապես առաջադրված K հաստությամբ շերտի մեջ:

(8) հավասարումներից բխում է, որ $Y_1 = D -$ ի դեպքում բնօրինակի բոլոր
 կոորդինատները հավասարվում են անվերջության: Սա նշանակում է, որ իրոք
 տարածության բոլոր անիսկական կետերի կերպարները դասավորվում են β սահ-
 մանային հարթության մեջ:

(7) և (8) հավասարումներից կարելի է համոզվել, որ $Y = (D - K) = F$ դեպքում ստացվում է $Y_1 = Y$: Այսինքն բնօրինակ-օբյեկտի բոլոր այն կետերը, որոնք դասավորված են Q հարթության մեջ, ձևափոխության ժամանակ մնում են իրենց տեղերում:

2. Տրվում են բնօրինակ-օբյեկտի երկու զուգահեռ հարթությունների (α և β) հեռավորությունները դիտակետից (g և f) և դրանց կերպարների (α_1 և β_1) հեռավորությունները (g_1 և f_1) նույն դիտակետից (սկ. 2):



Նկ. 2. Բնօրինակ-օբյեկտների և դրանց կերպարների կառուցումը

Այս դեպքում ձևափոխությունը որոշող հավասարումները ստանալու համար բավական է (7) հավասարումներում առկա K և D մեծություններն արտահայտել g, g_1, f և f_1 մեծություններով: Դրա համար բավական է տեղադրել $Y = g \rightarrow Y_1 = g_1$ և $Y = f \rightarrow Y_1 = f_1$ արժեքները (7) – ի երկրորդ հավասարման մեջ:

$$\text{Լուծելով} \begin{cases} g_1 = \frac{Dg}{g+K} \\ f_1 = \frac{Df}{f+K} \end{cases} \text{ համակարգը, ստանում ենք } D \text{ և } K \text{ մեծությունների}$$


հետևյալ արժեքները, որոնք արտահայտված են տվյալ դեպքի համար անհրաժեշտ և նախապես առաջադրված g, g_1, f, f_1 մեծություններով՝

$$K = \frac{fg(f_1 - g_1)}{fg_1 - f_1g}, D = \frac{f_1g_1(f - g)}{fg_1 - f_1g} : \quad (9)$$

Այսպիսով, դիտարկվող դեպքում անհրաժեշտ ձևափոխությունն իրականացնելու համար բավական է օգտագործել (7) և (8) հավասարումները՝ նրանցում տեղադրելով D և K մեծությունների արժեքները, որոնք որոշվում են (9) հավասարումներով [1-3]:

Այժմ ռելիեֆային հեռանկարի ստացման համար անհրաժեշտ կոորդինատների ձևափոխման վերևում դուրսբերված բանաձևերի ճշտությունը ստուգելու նպատակով ստանանք այդ նույն բանաձևերը՝ օգտագործելով երկրաչափական ալգորիթմը:

Տարածության կամայական A կետի ռելիեֆային հեռանկարի կառուցման երկրաչափական ալգորիթմը պատկերենք երկու տեսքերի (պրոյեկցիաների) միջոցով (նկ. 3):



Նկ. 3. Կետի ռելիեֆային հեռանկարի կառուցումը տեսքերի միջոցով

Հորիզոնական պրոյեկցիայի վրա դիտարկենք SMA_1 և ANA_1 եռանկյունները: Ելնելով այս եռանկյունների նմանությունից՝ ստանում ենք.

$$\frac{SM}{AN} = \frac{MA_1}{A_1N}, \text{ կամ } \frac{Y_1}{Y-Y_1} = \frac{X_1}{X-X_1} : \quad (10)$$

Դիտարկելով SPA_1 և AA_1B եռանկյունների նմանությունը, ստանում ենք՝

$$\frac{SP}{AB} = \frac{MA_1}{A_1N}, \text{ կամ } \frac{D}{Y-F} = \frac{X_1}{X-X_1} : \quad (11)$$

Հորիզոնական պրոյեկցիայի վրա դիտարկենք **ABA₁** և **SPA₁** եռանկյունները: Ելնելով այս եռանկյունների նմանությունից՝ ստանում ենք.

$$\frac{AB}{SP} = \frac{QA_1}{A_1 R}, \text{ իսկ } \frac{Y-F}{D} = \frac{Z-Z_1}{Z_1} : \quad (12)$$

(10), (11), (12) հավասարումները համատեղ լուծելով, ստանում ենք ռելիեֆային հեռանկարի կառուցման համար անհրաժեշտ կոորդինատների ձևափոխման հետևյալ անալիտիկ բանաձևերը [4-6].

Բնօրինակ $\rightarrow$ կերպար՝

$$\begin{cases} X_1 = \frac{DX}{Y+k} \\ Y_1 = \frac{DY}{Y+k} \\ Z_1 = \frac{DZ}{Y+K} \end{cases}, \quad (13)$$

Կերպար $\rightarrow$ բնօրինակ՝

$$\begin{cases} X = \frac{KX_1}{D-Y_1} \\ Y = \frac{KY_1}{D-Y_1} \\ Z = \frac{KZ_1}{D-Y_1} \end{cases}: \quad (14)$$

Եզրակացություն: Այսպիսով, ստացված բանաձևերը համընկնում են (7) և (8) բանաձևերի հետ, որոնք դուրս էին բերված անկախ ռելիեֆային հեռանկարի կառուցման երկրաչափական ալգորիթմից: Սա նշանակում է, որ դուրս բերված բանաձևերը կարելի է օգտագործել եռաչափ տարածության օբյեկտների ռելիեֆային հեռանկարների կառուցման գործընթացի ավտոմատացման համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ դուրս բերված բանաձևերը հանդիսանում են սովորական հարթ գծային հեռանկարի ստացման համար կիրառվող բանաձևերի ընդհանրացումը: Հարթ գծային հեռանկարի կառուցման բանաձևերը ստացվում են այստեղ դուրս բերված (13) և (14) բանաձևերից, եթե դրանցում մասնակից **K** մեծությունը (ռելիեֆային հեռանկարի անշարժ և սահմանային հարթությունների հեռավորությունը, կամ, որ նույնն է, ռելիեֆի հաստությունը) հավասարվում է զրոյի:

K մեծությանը կարելի է վերագրել նաև բացասական արժեքներ: Այդ դեպքում ռելիեֆի սահմանային հարթությունը կդասավորվի դիտողին ավելի մոտ, քան անշարժ կետերի հարթությունը, և արդյունքում կստանանք հակադարձ (սիմետրիկ) հեռանկար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Согомонян К.А.** Линейно-конструктивные методы формообразования (геометрическое моделирование). – Ереван: Айастан, 1990. – 214 с.
2. **Глаголев Н.А.** Проективная геометрия. – М.: Высшая школа, 1963. – 268с.
3. **Джапаридзе И.С.** Конструктивные отображения проективных преобразований пространства. – Тбилиси: Изд-во ГПИ, 1964. – 327 с.
4. **Берже М.** Геометрия: Пер. с франц. – М.: Мир, 1984. – Т. 1. - 560 с.
5. **Берже М.** Геометрия: Пер. с франц. – М.: Мир, 1984. – Т. 2. - 368 с.
6. **Дубровин Б.А., Новиков С.П., Фоменко А.Т.** Современная геометрия: Методы и приложения. – М.: Главная редакция физико-математической литературы, 1979. – 760 с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 16.07.2022:

К.А. СОГОМОНЯН, М.Г. БАКУНЦ

ПОЛУЧЕНИЕ НЕОБХОДИМЫХ АНАЛИТИЧЕСКИХ ФОРМУЛ ДЛЯ ПОСТРОЕНИЯ РЕЛЬЕФНОЙ ПЕРСПЕКТИВЫ

Выведены аналитические формулы преобразования, посредством которых любой объект в пространстве (оригинал) точно передается в его рельефную перспективу (изображение). С помощью этих формул устанавливается связь между каждой точкой оригинала и декартовыми координатами соответствующей точки на фигуре.

Ключевые слова: проективное изображение, преобразование, несобственные точки, образ, плоскость, луч, двойные элементы.

K.H. SOGHOMONYAN, M.G. BAKUNTS

OBTAINING THE NECESSARY ANALYTICAL FORMULAE FOR THE CONSTRUCTION OF A RELIEF VIEW

Let us derive the analytical formulae of the transformation through which any object in space (the original) is accurately rendered to its relief perspective (the image). With the help of these formulae, a connection is established between each point of the original and the Cartesian coordinates of the corresponding point on the image.

Keywords: projective reflection, transformation, pointless points, image, plane, ray, double elements.

Ա.Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, Ս.Խ. ԽՈՒՂԱՎԵՐՂՅԱՆ

ԲԶՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՇԽԻՉ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎՐԱ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Առաջարկվել է բջջային կապի համակարգերի էներգածախսի և էներգաարդյունավետության գնահատման մաթեմատիկական մոդել, որը հաշվի է առնում բաշխիչ տրանսպորտային գծերի վրա հնարավոր էներգետիկական կորուստները: Ցույց է տրվել, որ այդ կորուստները կախված են ազդանշանների հաղորդման կիրառվող տեխնոլոգիայից (օպտիկամանրաթելային, միկրոալիքային), տոպոլոգիական լուծումներից (աստղաձև, ծառաձև, օղակաձև) և համակարգի թողունակությունից:

Առանցքային բառեր. բջջային կապ, բազային կայան, էներգածախս, էներգաարդյունավետություն, տրանսպորտային գիծ:

Ներածություն: Պատմականորեն հեռահաղորդակցական բնագավառում մեծ տեղ է հատկացվել բջջային հեռախոսակապի համակարգերի այն խնդիրներին, որոնք միտված են մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, պահանջարկի ապահովմանը և ընկերությունների շահույթի մեծացմանը: Այդ իսկ պատճառով իրականացվող ներդրումները, նորարարական աշխատանքները և գիտակիրառական հետազոտությունները հիմնականում ուղղված էին համակարգի այն ֆունկցիոնալ պարամետրերի բարելավմանը, որոնք ապահովում էին մեծ ծավալով տվյալների հաղորդում, առավելագույն սպեկտրային արդյունավետություն և փոքր հապաղման ժամանակներ: Մյուս կողմից՝ ժամանակակից բջջային հեռախոսակապի համակարգերի շահագործման ընդհանուր ծախսերի մեջ էներգածախսի մեծ կշիռը (15...20%), ինչպես նաև էներգառեսուրսների գնի և էներգածախսի շարունակական աճը, էներգաարդյունավետության խնդիրը դարձրել են արդիական [1, 2]:

Բջջային հեռախոսակապի համակարգերի ընդհանուր էներգածախսը որոշվում է հետևյալ բանաձևով [3].

$$P_{total} = \sum_i^m n_i P_{BS_i} + P_{BH}, \quad (1)$$

որտեղ m -ը բազային կայանների (BS) տիպերի քանակն է համակարգում, n_i -ն՝ i տիպի BS-ների քանակը, P_{BS_i} -ն՝ i տիպի BS-ների էներգածախսը, P_{BH} -ն՝ բաշխիչ տրանսպորտային գծերի (Backhaul) վրա էներգետիկական կորուստները:

Էներգաարդյունավետության գնահատման համար կիրառվում է ծածկույթի «մակերեսի էներգածախս» (Area Power Consumption) ցուցանիշը [4-6].

$$APC_{total} = \frac{P_{total}}{\sum_i^m n_i A_{C_i}}, \quad (2)$$

որտեղ A_{C_i} -ն i տիպի BS-ների ծածկույթի (ազդեցության գոտու) մակերեսն է:

Գրականությունում բջջային հեռախոսակապի համակարգերի ընդհանուր էներգածախսը և էներգաարդյունավետությունը գնահատելիս, որպես կանոն, անտեսվում են տրանսպորտային զծերով պայմանավորված էներգետիկական կորուստները [7-11]: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ խոշոր BS-ների (macroBS) դեպքում տրանսպորտային զծերի ներդրումը ընդհանուր էներգածախսում աննշան է: Մյուս կողմից՝ ժամանակակից բջջային հեռախոսակապի համակարգերում, մասնավորապես, հետերոգեն ցանցերում (Heterogeneous Network - HetNet), բազմաքանակ փոքր BS-ների (microBS, picoBS, femtoBS) կիրառումը կարող է հանգեցնել նշված էներգետիկական կորուստների զգալի մեծացմանը:

Աշխատանքում վերլուծվել է բջջային հեռախոսակապի համակարգերի էներգաարդյունավետությունը՝ հաշվի առնելով բաշխիչ տրանսպորտային զծերի վրա էներգետիկական կորուստները:

Հաշվարկային մոդելը: BS-ների էներգածախսը գնահատվել է ստորև բերված հաշվարկային արտահայտությամբ [8].

$$P_{BS} = N_S \frac{\frac{N_{Tx} P_{out}}{\eta_{PA}(1-\delta_F)} + N_{Tx} P_{RF} + f P_{BB}}{(1-\delta_{MS})(1-\delta_{Cool})} + \frac{P_{AC-DC}}{\eta_{AC-DC}} + \frac{P_{DC-DC}}{\eta_{DC-DC}} + P_{PS}, \quad (3)$$

որտեղ N_S -ը և N_{Tx} -ը համապատասխանաբար սեկտորների և ալեհավաքների թվաքանակն է, P_{RF} -ն, P_{BB} -ն, P_{AC-DC} -ն և P_{DC-DC} -ն՝ համապատասխանաբար հաղորդիչ-ընդունիչ համակարգի, թվային ազդանշանի մշակման սարքավորման, լարման փոխակերպիչի և կարգավորիչի դրվածքային հզորությունները, P_{PS} -ն՝ փոփոխական հոսանքի սպառիչների գումարային հզորությունը, δ_{MS} -ն և δ_{Cool} -ը՝ համապատասխանաբար հաղորդման զծերի վրա և լրացուցիչ հովացմամբ պայմանավորված կորուստները, η_{AC-DC} -ն և η_{DC-DC} -ն՝ համապատասխանաբար լարման փոխակերպիչի և կարգավորիչի օ.գ.գ.-ները, f -ը բնութագրում է թվային ազդանշանի մշակման սարքավորման թվաքանակը մեկ սեկտորում ($f \in [N_{Tx}, 1]$):

Դիտարկվել է ազդանշանների հաղորդման երկու տեխնոլոգիա՝ միկրոալիքային (Microwave – MW) և օպտիկամանրաթելային (Fiber – Fib): Առաջին դեպքում էներգածախսի (1) բանաձևը կունենա այսպիսի տեսք.

$$P_{total} = \sum_i^m n_i P_{BS_i} + P_{BH}^{MW}, \quad (4)$$

որտեղ P_{BH}^{MW} բաղադրիչը կարող է մոդելավորվել հետևյալ կերպ.

$$P_{BH}^{MW} = P_{Sink} + \sum_j^{N_{BS}} P_j^{MW}. \quad (5)$$

Այս արտահայտությունում P_{Sink} -ը ընդունիչ (Sink) հանգույցի էներգածախսն է, P_j^{MW} -ն՝ միկրոալիքային տրանսպորտային զծերով j -րդ BS-ի վերահաղորդման գործողությունների իրականացման համար էներգածախսը, N_{BS} -ը՝ տարբեր տիպի BS-ների ընդհանուր քանակը: P_j^{MW} -ն կարող ենք արտահայտել երկու բաղադրիչով՝ կախված միկրոալիքային ալեհավաքների N_j^{Tx} քանակից և միկրոալիքային տրանսպորտային զծերով հաղորդվող $\mathbf{x}_j$ թրաֆիկի մեծությունից.

$$P_j^{MW} = P_{j,agg}(\mathbf{x}_j) + P_{Switch}(N_j^{Tx}, \mathbf{x}_j), \quad (6)$$

որտեղ

$$P_{j,agg}(\mathbf{x}_j) = \begin{cases} P_{Low}, & \text{երբ } \mathbf{x}_j \geq T h_{Low}, \\ P_{High}, & \text{երբ } \mathbf{x}_j < T h_{Low}, \end{cases}$$

$$P_{Switch}(N_j^{Tx}, \mathbf{x}_j) = \begin{cases} 0, & \text{երբ } N_j^{Tx} = 1, \\ P_s \left[\frac{\mathbf{x}_j}{\mathbf{x}_{Switch}^{Max}} \right], & \text{երբ } N_j^{Tx} > 1: \end{cases}$$

Այստեղ $P_{j,agg}(\mathbf{x}_j)$ -ը դիտարկվում է թրաֆիկի 2 ծայրահեղ վիճակի դեպքում ($T h_{Low}$ -ից ցածր և բարձր), իսկ $P_{Switch}(N_j^{Tx}, \mathbf{x}_j)$ -ում հաշվի է առնված կոմուտատորի էներգածախսը՝ P_s : Բնականաբար, վերջինս կիրառվում է այն դեպքերում, երբ միկրոալիքային ալեհավաքների թվաքանակը երկու և ավելի է:

Նմանատիպ դատողություններով էլ որոշվում է ընդունիչ հանգույցի էներգածախսը՝

$$P_{Sink} = P_{Sink,agg}(\mathbf{x}_{Sink}) + P_{Sink.Switch}(N_{Sink}^{Tx}, \mathbf{x}_{Sink}), \quad (7)$$

որտեղ

$$P_{Sink,agg}(\mathbf{x}_{Sink}) = \begin{cases} P_{Low}, & \text{երբ } \mathbf{x}_{Sink} \geq T h_{Low}, \\ P_{High}, & \text{երբ } \mathbf{x}_{Sink} < T h_{Low}; \end{cases}$$

$$P_{Sink.Switch}(N_{Sink}^{Tx}, \mathbf{x}_{Sink}) = \begin{cases} 0, & \text{երբ } N_{Sink}^{Tx} = 1, \\ P_s \left[\frac{\mathbf{x}_{Sink}}{\mathbf{x}_{Sink}^{Max}} \right], & \text{երբ } N_{Sink}^{Tx} > 1: \end{cases}$$

Օպտիկամանրաթելային տրանսպորտային զծերի դեպքում էներգածախսի (1) բանաձևը կունենա այսպիսի տեսք.

$$P_{total} = \sum_i^m n_i P_{BS_i} + P_{BH}^{Fib}, \quad (8)$$

որտեղ P_{BH}^{Fib} բաղադրիչը, համաձայն [3] աշխատանքի, կարող է մոդելավորվել հետևյալ կերպ.

$$P_{BH}^{Fib} = \left[\frac{1}{N_{Switch}^{Max}} (\sum_i^m n_i) \right] P_s + (\sum_i^m n_i) P_{dl} + N_{ul} P_{ul}: \quad (9)$$

Այստեղ P_{dl} -ը տրանզիտային “ի վար” թրաֆիկի ընդունման համար կոմուտատորի էներգածախսն է, N_{ul} -ը և P_{ul} -ը՝ “ի վեր” ինտերֆեյսերի համապատասխանաբար թվաքանակը և դրանց էներգածախսը:

Էներգաարդյունավետության գնահատման համար ծածկույթի մակերեսը որոշվում է հետևյալ բանաձևով [9].

$$A_{c_i} = \frac{3\sqrt{3}}{2} r_{max_i}^2, \quad (10)$$

որտեղ r_{max} -ն i տիպի BS-ների ծածկույթի առավելագույն շառավիղն է:


Վերլուծության արդյունքները: Դիտարկվել է միևնույն թողունակություն և ծածկույթ ապահովող երկու իրավիճակ: Առաջինի դեպքում բջջային հեռախոսակապի համակարգը կառուցված է միայն macroBS-ներով, իսկ երկրորդ դեպքում այն ընդգրկում է macro, micro և pico-BS-ներ: Յուրաքանչյուր իրավիճակի համար կայանների քանակը որոշվել է՝ ելնելով տվյալ ծածկույթի համար անհրաժեշտ թողունակության ապահովելու պահանջից՝ «Atoll» լիցենզավորված ծրագրային հարթակի միջոցով [12]:

Որպես ելակետային դիտարկվել են [8] աշխատանքում բերված macro, micro և pico-BS-ների տեխնիկական ցուցանիշները և էներգածախսը, իսկ այդ կայանների ծածկույթի շառավիղը ընդունվել են համապատասխանաբար $r_{max}=4000, 1000$ և 300 մ: P_{BH}^{MW} -ի և P_{BH}^{Fib} -ի հաշվարկի համար օգտագործվել են Ericsson ընկերության բջջային կապի համակարգերի հետևյալ տվյալները [13].

- միկրոալիքային տրանսպորտային գծերի դեպքում. $Th_{Low}=500$ Մբ/ս/վ, $N_{Switch}^{Max}=36$ Գբ/ս/վ, $P_{Low}=36$ Վտ, $P_{High}=92.5$ Վտ, $P_s=53$ Վտ,


- օպտիկամանրաթելային տրանսպորտային գծերի դեպքում. $P_s=300$ Վտ, $P_{ul}=2$ Վտ, $P_{dl}=1$ Վտ, $N_{Switch}^{Max}=24$ Գբ/ս/վ:

Նկ. 1-ում բերված են APC-ի գնահատման արդյունքները macroBS-ներով կառուցված տարբեր տրանսպորտային գծերով և թողունակությամբ համակարգերի դեպքում: Երևում է, որ օպտիկամանրաթելային տրանսպորտային գծերով համակարգերը նկատելիորեն էներգաարդյունավետ են՝ հատկապես մեծ թողունակությունների դեպքում (ունեն փոքր APC): Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ օպտիկամանրաթելային տրանսպորտային գծերով համակարգերի յուրաքանչյուր BS ունի առանձնացված երկկետային միացում ընդունիչ հանգույցի հետ:



Նկ. 1. Ծածկույթի մակերեսի էներգածախսը տարբեր տրանսպորտային զծերով և թողունակությամբ համակարգերի դեպքում

Նկ. 2-ում բերված են macroBS-ներով և macro+micro+picoBS-ներով կառուցված բջջային համակարգերի APC -ի կախվածությունները թողունակություններից՝ առանց և օպտիկամանրաթելային տրանսպորտային զծերի վրա էներգակորուստների հաշվառմամբ:



Նկ. 2. Ծածկույթի մակերեսի էներգածախսը macroBS-ներով և macro+micro+picoBS-ներով կառուցված բջջային համակարգերի դեպքում՝ կախված դրանց թողունակությունից՝ առանց և օպտիկամանրաթելային տրանսպորտային զծերի վրա էներգակորուստների հաշվառմամբ

Կարող ենք փաստել հետևյալ առանձնահատկությունները.

- macro+micro+picoBS-ներով կառուցված համակարգերը, մասնավորապես HetNet-ը, ավելի քան 2 անգամ էներգաարդյունավետ են միայն խոշոր BS-ներ ընդգրկող համակարգերից,




- 4G (թողունակությունը՝ ոչ փոքր 0.1 Մբ/վ/մ²-ից) և 5G (թողունակությունը՝ ոչ փոքր 10 Մբ/վ/մ²-ից) բջջային համակարգերի դեպքում, անկախ ազդանշանների հաղորդման տեխնոլոգիայից, տրանսպորտային գծերի ներդրումը ընդհանուր էներգաարդյունավետությունում աննշան է:

Միկրոալիքային տրանսպորտային գծերով համակարգերի համար վերլուծվել է գծերի երեք ճարտարապետություն (տոպոլոգիա)՝ «աստղ», «ծառ» և «օղակ»: Անկախ տոպոլոգիայի ձևից՝ բոլորն էլ ունեն կենտրոնական հանգույց (Hub), որը թրաֆիկն ուղղորդում է ընդունիչ հանգույցին: Հետևաբար, կենտրոնական հանգույցների քանակը կախված կլինի BS-ների քանակից և տոպոլոգիայի չափսերից: Հեշտության համար ընդունենք, որ տոպոլոգիայում յուրաքանչյուր BS կարող է հանդես գալ որպես կենտրոնական հանգույց:

Աղյուսակում խմբավորված են macro+micro+picoBS-ներով կազմված համակարգերի APC-ի գնահատման արդյունքները միկրոալիքային տրանսպորտային գծերի տարբեր ճարտարապետությունների համար երկու թողունակության դեպքում:

Աղյուսակ

Մակերեսի էներգածախսը, Վտ/կմ²

Թողունակությունը, Մբ/վ/մ ²	Առանց տրանսպ. գծերի	«Ծառ»	«Աստղ»	«Օղակ»
				
10	265	304	286	328
100	384	485	457	522

Ինչպես երևում է աղյուսակից, առավել էներգածախսատար են «Օղակ» ճարտարապետությամբ տրանսպորտային գծերը: Դա հիմնականում պայմանավորված է երկու գործոնով: Նախ՝ օղակաձև աշխատանքը ապահովելու համար յուրաքանչյուր BS պետք է համալրված լինի կոմուտատորով: Բացի այդ, տրանզիտ կապուղիները միշտ գործում են մեծ թողունակության ռեժիմում՝ միջանցիկ թրաֆիկի մեծ ծավալի պատճառով: Մյուս կողմից՝ օղակաձև տոպոլոգիայի դեպքում որևէ կապուղու հնարավոր խափանման ժամանակ աշխատանքը կարելի է կարգավորել, ինչը բացառվում է էներգաարդյունավետության տեսակետից գերադասելի «Աստղ» ճարտարապետությամբ տրանսպորտային գծերի դեպքում: Այս հանգամանքն ընդգծում է փոխգիջումի կարևորությունը էներգասպառման և խանգարումակայունություն միջև: Էներգաարդյունավետության տեսակետից ծառաձև տոպոլոգիան միջանկյալ տեղ է զբաղեցնում մյուս երկու տոպոլոգիաների նկատմամբ:

Այս դեպքում միակ BS-ը, որը պետք է ունենա կոմուտատոր և մեծ թողունակություն, կենտրոնական հանգույցն է:

Ստացված արդյունքներից հետևում է, որ գերբարձր թողունակությամբ HetNet կամ նմանատիպ ճարտարապետությամբ բջջային ցանցերի դեպքում տրանսպորտային գծերով պայմանավորված էներգետիկական կորուստները կդառնան զգալի՝ խնդիրը դարձնելով արդիական: Անհրաժեշտ է նշել, որ առկա բջջային հեռախոսակապի համակարգերը, դրանց տեխնոլոգիաները և ճարտարապետությունը հիմք են հանդիսանալու առնվազն մեկ տասնամյակ հետո բջջային կապի հաջորդ՝ վեցերորդ (6G) սերնդի ի հայտ գալուն: 2018թ.-ին ITU-ի կողմից արդեն իսկ կազմավորվել է ֆոկուս-խումբ (Focus Group Technologies for Network 2030 - FG NET-2030), որը սկսել է զբաղվել բջջային կապի ցանցերի զարգացման հարցերով մինչև 2030 թ.-ը և հետո [14]: Ակնկալվում է, որ ծառայությունների մատուցման հիմնական ուղղություններն են լինելու հոլոգրաֆիկ կապը, ծայրահեղ վիճակներում արագ արձագանքի կապը և ուղղահայաց զարգացող շուկաների բարձր ճշտությամբ կապը: Ենթադրվում է, որ այդ ցանցերը կսկսեն գործել առնվազն 1 *Գբիթ/վ* թողունակությամբ [14, 15], իսկ դա կհանգեցնի BS-ների խտության շեշտակի ավելացմանը, հետևաբար, կմեծանան տրանսպորտային գծերին առնչվող սարքերի և հանգույցների քանակը և դրանց վրա էներգետիկական կորուստները:

Եզրակացություն: Իրականացվել է բջջային հեռախոսակապի համակարգերի էներգաարդյունավետության իրավիճակային վերլուծություն՝ հաշվի առնելով բաշխիչ տրանսպորտային գծերի վրա էներգետիկական կորուստները: Դիտարկվել են ազդանշանների հաղորդման տարբեր տեխնոլոգիաներով, թողունակությամբ և ճարտարապետությամբ համակարգեր: Ցույց է տրվել, որ բոլոր դեպքերում ազդանշանների հաղորդման օպտիկամանրաթելային տեխնոլոգիան նկատելիորեն էներգաարդյունավետ է միկրոալիքային տեխնոլոգիայից: Ստացված արդյունքները միանշանակ փաստում են բջջային հեռախոսակապի համակարգի ընդհանուր էներգաձախսում տրանսպորտային գծերով պայմանավորված էներգետիկական կորուստների հաշվառման անհրաժեշտությունը ժամանակակից գերբարձր թողունակությամբ HetNet կամ ապագա նմանատիպ ճարտարապետությամբ բջջային համակարգերի դեպքում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 10-4/22AA-2B001 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Shurdi O., Ruci L., Biberaj A., Mesi G.** 5G Energy Efficiency Overview // European Sci. J.- 2021. –V. 17(3).- P. 315327.
2. **Wu Q., Li G.Y., Chen W., Schober R.** An Overview of Sustainable Green 5G Networks // IEEE Wireless Comm.- 2017.- V. 24(4).- P. 72-80.

3. Impact of Backhauling Power Consumption on the Deployment of Heterogeneous Mobile Networks / **S. Tombaz, P. Monti, Wang Kun**, et al // Proc. of IEEE Global Telecommunications Conference. - 2011.- P. 83-87. DOI: 10.1109/glocom.2011.6133999.
4. **Yuli Zhang, Yuhua Xu, Youming Sun, Qihui Wu**. Energy Efficiency of Small Cell Networks: Metrics, Methods and Market // IEEE Access.- 2017.-V. 5.- P. 5965 – 5971.
5. **Hamdoun H., Loskot P., O'Farrell T., He J.** Survey and Applications of Standardized Energy Metrics to Mobile Networks // Ann. Telecommun. -2012.- V. 67.- P. 113–123.
6. Environmental Engineering (EE); Metrics and Measurement Method for Energy Efficiency of Wireless Access Network Equipment. ETSI ES 202 706-1 V1.6.1 (2021) [Առգիծ]. Հասանելի է https://etsi.org/deliver/etsi_es/202700_202799/20270601/01.06.01_60/es_20270601v010601p.pdf [Մատչելի էր 01.10. 2022].
7. **Deruyck M., Tanghe E., Joseph W., Martens L.** Characterization and Optimization of the Power Consumption in Wireless Access Networks by Taking Daily Traffic Variations into Account // EURASIP J. on Wireless Communications and Networking.- 2012.- N 1.- P. 1-12.
8. **Այվազյան Ա.Գ., Խուդաբերդյան Ս.Խ.** Բջջային կապի ցանցերի բազային կայանների էներգաձախսի գնահատումը // ՀԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր. Տեխն. գիտ. սերիա.- 2021.- Շ. LXIX, № 1.- Էջ 173-181:
9. **Айвазян А.Г., Худавердян С.Х.** Анализ энергоэффективности базовых станций сотовой связи // Вестник НПУА: Информационные технологии, электроника, радиотехника.- 2021.- N1.- С. 94-103.
10. **Premalatha J., Nisha S.A.** Energy Competence of Base Station in Cellular Network // Int. J. of Recent Techn. and Eng.- 2019.- V.8 (2). – P. 2020-2023.
11. **Sharma D., Singhal S., Rai A., Singh A.** Analysis of Power Consumption in Standalone 5G Network and Enhancement in Energy Efficiency using a Novel Routing Protocol // Sustainable Energy, Grids and Networks.-2021.- V. 26.- P. 100427. DOI: 10.1016/j.segan.2020.100427.
12. Atoll Radio Planning Software Overview [Առգիծ]. Հասանելի է <https://www.forsk.com/atoll-overview> [Մատչելի էր 01.10.2022]:
13. Ericsson Microwave Networks Portfolio. [Առգիծ]. Հասանելի է <https://ericsson.com/en/portfolio/networks> [Մատչելի էր 01.10.2022]:
14. Network 2030. A Blueprint of Technology, Applications and Market Drivers Towards the Year 2030 and Beyond. Written by FGNET-2030. – ITU, 2019. – [Առգիծ]. https://itu.int/en/ITU-T/focusgroups/net2030/Documents/White_Paper.pdf [Մատչելի էր 01.10.2022]:
15. **Jiang W., Han B., Habibi M.A., Schotten H.D.** The Road Towards 6G: A Comprehensive Survey // IEEE Open J. of Comm. Soc.- 2021.- 2.- P. 334–366. DOI: 10.1109/ojcoms.2021.3057679.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 05.10.2022:

А.Г. АЙВАЗЯН, С.Х. ХУДАВЕРДЯН

**ОЦЕНКА ЭНЕРГЕТИЧЕСКИХ ПОТЕРЬ НА ТРАНСПОРТНО-
РАСПРЕДЕЛИТЕЛЬНЫХ ЛИНИЯХ СИСТЕМ СОТОВОЙ СВЯЗИ**

Предложена математическая модель оценки энергопотребления и энергоэффективности систем мобильной связи, учитывающая возможные энергетические потери на транспортно-распределительных линиях. Показано, что эти потери зависят от применяемой технологии передачи сигнала (оптоволоконная, микроволновая), топологических решений (звезда, дерево, кольцо) и пропускной способности системы.

Ключевые слова: сотовая связь, базовая станция, энергопотребление, энергоэффективность, транспортно-распределительная линия.

A.G. AYVAZYAN, S.KH. KHUDAVERDYAN

**ASSESSING THE ENERGY LOSSES ON BACKHAUL OF CELLULAR
COMMUNICATION SYSTEMS**

A mathematical model is proposed for assessing the energy consumption and energy efficiency of cellular communication systems, taking into account the possible energy losses on backhaul. It is shown that these losses depend on the applied technology options (fiber, microwave), topology solutions (star, tree, ring), and the area throughput.

Keywords: cellular communication system, base station, energy consumption, energy efficiency, backhaul.

N.D. YEZAKYAN, A.E. YESAYAN, J-M. SALLESE

VERILOG_A IMPLEMENTATION OF NANOWIRE JUNCTIONLESS ISFET COMPACT MODEL AND READ-OUT CIRCUIT DESIGN

